**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Հարկային մարմնի 2020 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ**

***<u>Ընթացիկ աշխատանքներ</u>***

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 19691.9 մլն դրամ՝ պլանավորված 19200.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.6 տոկոսով կամ 491.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 113 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 34 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 55.2 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 77 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 39-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ ԱՀ կառավարության 2020թ. մայիսի 18-ի N 372-Ա որոշմամբ հաստատված շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերի, 9-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 3-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 2 սնանկության հայց՝ 51188.5 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 13 հայցադիմում՝ 215.0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցի հիման վրա կայացվել է 1 վճիռ՝ 10.0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 121 վարչական գործով սահմանվել է 1541.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9539 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 9293:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 21 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մայիս ամսում կատարվել է վերադարձ 104 վարձու աշխատողի՝ 13.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 18 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

***<u>Հասարակայնության հետ կապ</u>***

Մայիս ամսում ԱՀ կառավարության որոշմամբ հաստատվել են կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկու միջոցառումներ, որոնց շրջանակում հարկ վճարողներից ընդունվել են միանվագ դրամական աջակցություն և դրամաշնորհ ստանալու վերաբերյալ 1063 դիմումներ (այդ թվում՝ 50-ը ճշգրտված), ընթացքավորվել 207 դիմումներ:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում շարունակվել է նաև կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարած սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 84 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

Մայիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 850, ելքագրվել՝ 151 նամակ-գրություն: